

բեւակերպին ճոխութեան մասին վկայութիւնը իրապէս կ'ամբողջացնէ այն, ինչ որ Դաւրի-ժեցի կը պատմէ այդ գերդաստանի համար: Մեծահարուստ այդ ընտանիքը սիրած է ապրիլ այն ճոխ կեանքով, որ սիրելի է արեւելք-ցիներուն, մասնաւորաբար Պարսիկներուն:

Հետաքրքրական է վկայութեան այն մասը, ըստ որուն ցոյց կը տրուի թէ Խօջայ Նազարի տան որմերը ծածկուած էին Հէրպէրթի ընդվզեցուցիչ եւ անյիշելի նկատած սրմանկարներով, հաւանաբար դորձ Սպահանցի հայ նկարիչ (նազաչ) վարպետներու, կամ, ո՛վ գիտէ, գուցէ նոյնիսկ Մինաս վարպետին, որուն Խօջայ Սաֆրազի տան որմանկարները պատրաստելու պատմութիւնը կը տրուի մեզի, ինչ որ իր կարգին պիտի տեսնենք Խօջայ Սաֆրազի կենսագրութեան ատեն:

Շահ Ապպաս Մեծ մեռաւ 1629-ին սկիզբը, եւ անոր յաջորդեց Շահ Աէֆի 1629-1642):

Փրա Տիմաս Սպահանէն Հոռոմ դրած սեպտեմբեր 18, 1629 երկար նամակին մէջ կ'ըսէ, թէ նոր Շահը «ինքզինքը բոլոր Քրիստոնէից բարեացակամ ցոյց կուտայ, եւ հայոց հետ նոյնիսկ ընտանի, ան բազմիցս դացած է Խօջայ Նազարի եւ Զուղայի ուրիշ երեւելիներու տուները անոնց տան ճաշելու: Իրաւ է որ անոնք բրած են եւ կը շարունակեն մեծ դրամական նուէրներ եւ ուրիշ ընծաներ ալ (Շահին): (32)

Շահը այդ ատեն 18 կամ 19 տարեկան էր ղեռ:

Նոր Զուղայի վանքի թանգարանին մէջ կը պահուի հրովարտակ մը Շահ Աէֆիէ, տրուած Հիծրէթի 1039 թուականին: Անոր մէջ մօտաւորապէս կ'ըսուի. «Ըստ հրամանին Զուղայեցի հայ վաճառականները եւ առեւտրականները, երբ արտասահմանէն ոսկի եւ արծաթ ներմուծէին, ատիկա պիտի յանձնէին Խօջայ Նազարին, որ իր կարգին պիտի յանձնէր Խօջայ Սանտալին ի ղիմաց պետական դանձին կատարած փոխառութեան: Այժմ կը հրամայուի, որ այդ ոսկին ու արծաթը յանձնուի Խօջայ Մարջանի, որուն տուած ստացականը

պիտի ճանչցուի օրինական եւ պետական պարտքի համար պիտի հաշուուի»:

Հրամանագրին թուականը 1039 հաւասար է Քրիստոսի օդոստոս 21, 1629-էն, 9 օգոստոս, 1630-ին:

Յանուն վաճառականութեան եւ իրր վաճառականապետ Խօջայ Նազար կը պահէր նաեւ ըստ կարելոյն բարի յարաբերութիւն Լատին կրօնապետութեան եւ Պարսկաստան ղտնուող իր առաքեալներուն հետ: Փրա Տիմաս 30 մայիս, 1627 թուակիր Սպահանէն Հոռոմ դըրած նամակին մէջ կը վկայէ.

«Աւագ Ծարաթ (այցելեցի) Խօջայ Նազարին Զատկուան շնորհաւորութիւնները տալու... մենք ունինք Խօջայ Նազարին մէկ դաւակիր մեր տանը, որն որ կ'ըսէ ան (Խօջայ Նազար), տուած է (Լատին) կրօնաւոր ըլլալու. երեք ամիսէն ան (Խօջայ Նազարի գաւակը) մեր լեղուն պիտի սորվի:» 33)

Դիտել տամ, որ Խօջայ Նազար Լատինամերձութենէ մղեալ չէր որ կ'ընէր ասիկա, այլ պարզապէս կ'ուզէր այդ կերպով շահիլ Լատին պաշտպանութիւնը Եւրոպայի մէջ դորձ ունեցող Հայ վաճառականներուն համար: Նոյն ատեն իր մէկ գաւակին Լատինեէն սորվին իսկ ցոյց կուտայ հօրենական հեռատեսութիւնը Խօջայ Նազարին մէջ՝ իր ընտանիքին առեւտրական գործունէութիւնը Եւրոպայի մէջ հոն գործածուող պաշտօնական մէկ լեղուով իր տան անմիջական մէկ անդամին շնորհիւ անմիջորդ կատարել տալու նպատակաւ:

Հ. Ակինեան կը գրէ. «Խօջայ Նազար իւր բարեացակամութեամբ եւ հեռատեսութեամբ կ'առաջնորդէր Աղլին, ուղղութիւն կուտար Հայ Եկեղեցւոյն, մասնաւորապէս խորհրդականն էր Մովսէս կաթողիկոսին եւ անոր պաշտպանը ի սկզբանէ անախ: Բարեացակամ էր անիկա նոյնքան ազնուութեամբ նաեւ հանդէպ Եւրոպացի առաքեալներու, որոնք կը գործէին Սպահան եւ կամ Պարսկաստանի ճանապարհով կ'ուղեւորէին դէպի հեռաւոր արեւելք: Անոր այս բարեացակամ վերաբերմունքը արեւմտեան առաքեալներուն հանդէպ ոչ

32) Chronicle Carmelites, Vol. p. 308:

33) Անդ՝ էջ 318-319: